ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝

1) 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը (ոչ նյութական վնաս):».

2) 17-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 162.1-րդ հոդվածով.

«**Հոդված 162.1. Ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը**

1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի բնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա գույքային իրավունքները կամ անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում, ապա այդ անձն իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածում նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան»:

Հոդված 3. Օրենսգրքի 2.1-րդ պարագրաֆի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «§ 2.1. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել 1087.2. հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1087.2. Ոչ նյութական վնասի հատուցման պայմանները

1. Ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում է սույն հոդվածին և սույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածին համապատասխան:

2. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

3. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է դրամական միջոցներով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարության և համաչափության սկզբունքներին համապատասխան:

6. Ոչ նյութական վնասի չափը որոշելիս՝ դատարանը հաշվի է առնում վնասի բնույթը, այն պատճառելիս մեղքի առկայությունը, ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը և աստիճանը՝ նկատի ունենալով ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները:

7. Սույն հոդվածով սահմանված՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել չորսամսյա ժամկետում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ: 2010 թվականին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացման արդյունքում սահմանվեց պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության մեխանիզմ, որը սակայն ոչ նյութական վնասի վերականգնման միայն մասնակի դրսևորում է: Այդ մեխանիզմը վերաբերում է միայն պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությանը, մինչդեռ պետական մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության հետևանքով անձի հիմնարար իրավունքների խախտման հետևանքով առաջացած ոչ նյութական վնասի՝ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի դրամական հատուցման հնարավորություն ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում: Այդ բացի լրացումը կարևոր է իրավական պաշտպանության ներպետական միջոցների համակարգն ամբողջացնելու դիտանկյունից՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի անդամ գրեթե բոլոր պետությունների օրենսդրությամբ այդպիսի կառուցակարգ ամրագրված է:

Ոչ նյութական վնասի նյութական հատուցման առաջարկվող կառուցակարգի ամրագրումը կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման առումով: Այսպես, 2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա), ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է իր տարածքում երաշխավորելու Եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Դա նաև նշանակում է, որ այն անձինք, ովքեր գտնում են, որ Հայաստանի Հանրապետության կողմից խախտվել են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ Եվրոպական դատարան), եթե Հայաստանում սպառել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) 5-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»: Այս դրույթն իմպերատիվ կերպով պարտավորեցնում է Եվրոպական կոնվենցիան վավերացրած պետությանը, տվյալ դեպքում՝ Հայաստանին, ներպետական օրենսդրությամբ ամրագրել փոխհատուցման իրավունքը՝ անօրինական ձերբակալման կամ կալանավորման

հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի համար: Ավելին, ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգի սահմանման անհրաժեշտության մասին է նշվել նաև Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վճռում: Մասնավորապես, *Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռում (2012թ.) Եվրոպական դատարանը գտել է, որ ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմների բացակայությունը, որի հետևանքով Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված երաշխիքների խախտման արդյունքում տառապանք կրած անձը զրկվում է նման փոխհատուցում ստանալու հնարավորությունից, ինքնին 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում է: Հետևաբար ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսվի նման հնարավորություն (§§ 155-159):

Հատկանշական է, որ Եվրոպական կոնվենցիայով ամրագրված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքից օգտվելու հնարավորությունը կարևոր պայման է նաև դրա 13-րդ հոդվածով սահմանված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման համար: Այդ մասին են վկայում Եվրոպական դատարանի՝ տարբեր վճիռներում արտահայտված դիրքորոշումները: Այս դիրքորոշումն արտահայտվել է նաև *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում (2012թ.), որտեղ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «Եվրոպական կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներ հանդիսացող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը պետք է սկզբունքորեն հասանելի լինի իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում» (§ 46): Այն միաժամանակ եզրահանգել է, որ «դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետևանքով իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար: Քանի որ Հայաստանի օրենսդրությամբ նման հատուցում չի նախատեսում, դիմումատուն զրկված է եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից... Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում» (§ 47-48):

Բացի դրանից, նույն *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգի բացակայությունը, հետևաբար նաև՝ քաղաքացուն նման հնարավորությունից զրկելը, խախտում է նաև Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածը, որով երաշխավորվում է սխալ դատապարտման դեպքում փոխհատուցման իրավունքը: Նշված գործով իր վճռում Եվրոպական դատարանը գտնել է, որ «թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև դատական սխալի հետևանքով դատապարտված անձին փոխհատուցման տրամադրումն է ցանկացած ոչ նյութական վնասի, օրինակ՝ տագնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի համար: Տվյալ գործով դիմումատուին նման փոխհատուցում, այնուամենայնիվ, չի տրվել... Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 7 Արձանգրության 3-րդ հոդվածի խախտում» (§ 51-52):

Վերը նշված կոնվենցիոն դրույթներով ու Եվրոպական դատարանի վճիռներով են պայմանավորված օրենքի նախագծում Եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման դեպքում քաղաքացուն, իսկ թիվ

7 Արձանագրության 3-րդ հոդվածում նախատեսված պայմաններում արդարացված դատապարտյալին ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի նախատեսման հիմնավորումը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Օրենքի նախագծով առաջարկվում է ներդնել ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը: Ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգի ամրագրմամբ, կապահովվի Եվրոպական կոնվենցիան վավերացնելու արդյունքում ստանձնած պարտավորության կատարումը, իսկ քաղաքացիների համար հնարավորություն կտրվի կոնկրետ դեպքերում ստանալու հատուցում՝ ոչ նյութական վնասի համար:

Բացի դրանից, նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» գլխում (պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները սահմանող դրույթների հետ մեկտեղ) ամրագրել ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները:

Նախատեսվում է սահմանել, որ եթե պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել Եվրոպական կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգման արգելք) կամ 5-րդ (ազատության իրավունք) հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում: Բացի դրանից, հատուցման իրավունք ունի նաև այն դատապարտյալը, ով արդարացվել է Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածում նախատեսված պայմաններում:

Մասնավորապես, առաջարկվող օրենքի գործողությունը նախատեսվում է տարածել հետևյալ դեպքերի վրա՝

1) իրավասու պետական մարմինների կողմից քաղաքացուն խոշտանգման ենթարկելը կամ անիրավաչափորեն կյանքից զրկելը.

2) ենթադրաբար պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության արդյունքում կյանքից զրկված անձի մահվան կամ ենթադրյալ խոշտանգման փաստի առթիվ պատշաճ քննություն չիրականացնելը.

3) անձին ազատությունից անիրավաչափորեն զրկելը.

4) նոր կամ նոր ի հայտ եկած հանգամանքներով դատապարտյալի արդարացումը (բացառությամբ՝ եթե դատապարտումը ամբողջովին կամ մասնակիորեն տեղի է ունեցել դատապարտյալի մեղքով, օրինակ՝ ինքնախոստովանական ցուցմունքի հետևանքով):

Ոչ նյութական վնասի հատուցման անհրաժեշտ պայման է համարվում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի դատական հաստատումը:

Օրենքի նախագիծն ուժի մեջ է մտնելու 2014 թվականի նոյեմբերի 1-ից:

3. Նախագծի մշակման ընթացքում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումները

Օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունմամբ ակնկալվում է ապահովել Եվրոպական կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը, *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* և *Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործերով Եվրոպական դատարանի կայացրած վճիռների պատշաճ կատարումը: Բացի այդ, ակնկալվում է բարձրացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավական պաշտպանվածության մակարդակը՝ նրանց տրամադրելով իրավական պաշտպանության նոր արդյունավետ գործիք, ինչպես նաև մեծացնել իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը՝ մարդու հիմնարար իրավունքներին առնչվող որոշումներ կայացնելիս, գործողություններ կատարելիս կամ անգործություն դրսևորելիս:

Ակնկալվում է նաև, որ օրենքի ընդունմամբ կնվազի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական կոնվենցիայի խախտում արձանագրող Եվրոպական դատարանի վճիռների թիվը:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Օրենքի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Օրենքի ընդունման կապակցությամբ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Օրենքի ընդունման կապակցությամբ նախատեսվում է պետական բյուջեում ծախսերի ավելացում: Նկատի ունենալով, որ օրենքի նախագծով ներդրվող ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը նոր է, և համապատասխան պրակտիկան բացակայում է՝ ներկա դրությամբ հնարավոր չէ հստակեցնել օրենքի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի ավելացման չափը: Բացի դրանից, օրենքի նախագծով նախատեսվում է, որ վնասի հատուցման չափը որոշելու է դատարանը՝ ողջամտության, արդարության և համաչափության սկզբունքներին համապատասխան, ուստի հնարավոր չէ նաև կանխորոշել հատուցման ենթակա դրամական միջոցների չափը:

Միաժամանակ, երկարաժամկետ կտրվածքով օրենքի նախագծի հետևանքով տնտեսվելու են այն պետական միջոցները, որոնք իրավունքների խախտման զոհերին կվճարվեին իրավունքների խախտման հետևանքով Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա՝ Հայաստանի ներպետական օրենսդրությամբ համապատասխան կառուցակարգի բացակայության պայմաններում: Այսպես, նախագծի կարգավորման առարկայի մեջ ընդգրկված խախտումների համար Հայաստանի վերաբերյալ գործերով միայն 2012 թվականի ընթացքում Եվրոպական դատարանը սահմանել է շուրջ 200 հազար եվրոյին համարժեք փոխհատուցում ոչ նյութական վնասի համար և շուրջ 23 հազար եվրոյին համարժեք փոխհատուցում ծախսերի և ծախքերի համար:

Անհրաժեշտ է նաև նշել, որ նախագծում սահմանվել է օրենքն ուժի մեջ մտնելու ուշ ժամկետ՝ 2014 թվականի նոյեմբերի 1-ը, ուստի առաջարկվող կառուցակարգը, ըստ

էության, գործնականում կիրառվելու է 2015 թվականի պետական բյուջեի սահմաններում, հետևաբար 2014 թվականի պետական բյուջեում ծախսերի ավելացում չի նախատեսվում: